ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2019 թվականի N: 153-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 1-ին ենթակետի, 5-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մայիսի 2-ի թիվ 01/07.1/6926-19 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Լեռնիկ Եղիազարյանի լիազորությունները և նրա փոխարեն Խորհրդի կազմում երեք տարի ժամկետով հաստատել Լիզա Գասպարյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի · N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N70-Ա որոշման հավելվածում «Եղիազարյան Լեռնիկ» բառերը փոխարինել «Գասպարյան Լիզա» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է